13 Հունիս 2013, 748 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի N 123-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Աուդիտորական գործունեության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին, <<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 3-ի <<Աուդիտորական որակավորման քննությունների անցկացման կարգը և քննությունների ծրագիրը հաստատելու մասին>> N 123-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) ուժը կորցրած ճանաչել 1-ին կետը.

2) 1.1-ին կետից հանել «մինչև նրանց հավատարմագրումը» բառերը.

3) 1.3-րդ կետում <<1-ին կետի <<ա>> ենթակետով հաստատված կարգով>> բառերը փոխարինել <<1.4-րդ կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույթներով>> բառերով.

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.4-րդ կետով.

<<1.4 Սահմանել, որ՝

ա) աուդիտորների որակավորման քննություններն անցկացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավատարմագրված մասնագիտացված կառույցը (այսուհետ՝ մասնագիտացված կառույց): Քննությունների արդյունքների համաձայն աուդիտորի որակավորման վկայականները շնորհում է լիազորված մարմինը՝ քննությունների արդյունքների մասին տեղեկություններն ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում.

բ) աուդիտորների որակավորման քննություններն անցկացվում են Հաշվապահների միջազգային դաշնության (այսուհետ՝ ՀՄԴ) կրթական ստանդարտներին համապատասխան կազմված ծրագրով (այսուհետ՝ որակավորման քննությունների ծրագիր), որը պետք է ներառի հետևյալ բաժինները՝

Ֆինանսական հաշվառման հիմունքներ

Ֆինանսական տեղեկատվություն կառավարման համար

Իրավագիտության հիմունքներ

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրություն

Ֆինանսական կառավարում և վերահսկողություն

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում

Աուդիտ և ներքին վերահսկողություն:>>:

2. Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելն աուդիտորների որակավորման քննությանը մասնակցելու համար լիազորված մարմին դիմած դիմողների քննություններն անցկացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 3-ի N 123-Ն որոշմամբ հաստատված՝ լիազորված մարմնի կողմից աուդիտորների որակավորման քննությունների անցկացման կարգին համապատասխան:

3. Սույն որոշումն աուդիտորի որակավորման վկայական ունեցող և վերջին երեք տարվա ընթացքում առնվազն մեկ տարի որևէ աուդիտորական ընկերությունում որպես աուդիտոր աշխատած անձանց վրա տարածվում է սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 30 ամիս հետո: Գործող վկայականների ժամկետը լրանալու դեպքում դրանց գործողության ժամկետը երկարաձգվում է մինչև սույն կետում նշված երեսունամսյա ժամանակահատվածը լրանալը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Տիգրան Սարգսյան